№ 218 Նոյեմբերի 22 (Դեկտեմբերի 4) 1881 Նոյեմբերի 22 (Դեկտեմբերի 4) № 218

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ. կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Ստորագրողներից դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ"

### ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ **1882** ԹԻՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով։

ՊՐՕԳՐԱՄ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆեյլիետօն կամ բանասիրական, VIII. Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. 10 բուբլ է, կէս տարվան 6 բ., իւրաքանչիւր ամսին 1 բուբլ։ Հատով համարները 5 կոպէկ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Վրաց «Դրօէբա» լրագրի յօդուածը։ Նամակ Շամախուց։ Նոր լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Գերմանիա։ Նամակ Պարսկաստանից։ Արտաքին լուրեր։— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

---

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՎՐԱՑ „ԴՐՕԷԲԱ" ԼՐԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾԸ

—

Վրաց „Դրօէբա" լրագիրը իր 241 համարում տպել է մի յօդուած Հայոց բարեգործական ընկերութեան վերաբերմամբ, որ մենք առաջ ենք բերում ամբողջութեամբ։

Նոյեմբերի 15-ին Թիֆլիսի հայերը Արծրունու թատրոնում ժողով ունէին։ Հաւաքվեցան երեք հարիւրից աւելի անդամներ այն „Բարեգործական ընկերութեան", որ ունի նպատակ օգնելու տառապեալներին, կարօտեալներին և դուրս բերելու խոր մթութիւնից իրանց եղբայրակիցներին, տարածելով լուսաւորութիւն, արհեստագիտութիւն և ուսումնական հիմնարկութիւններ թէ կովկասում և թէ Անդրկովկասում։

Ժողովը ընտրեց նախագահ և այն անձանց, որոնք պէտք է ղեկավարեն ընկերութեան բոլոր գործերը և պատասխանատու լինեն իրանց գործողութեամբ ընտրողների առաջ։ Ամեն անդամ մեծ եռանդ ցոյց տուեց. ամենքն էլ ուրախ դէմք ունէին. ամենքն էլ յափշտակված էին. ամենի վրա նկատվում էր, որ նա իր սրտի մէջ պատկերացած ունի իր հայ եղբայրակիցների բարօրութիւնը։ Այս ժողովի մէջ մարդ տեսնում էր միայն այն անձանց, որոնք լաւ հասկացրել են իրանց թէ ի՞նչ է անձնական և ի՞նչ հասարակական պարտաւորութիւնը և գործը։

Նրանք այս ընդհանուր գործի մէջ ցոյց տուին մարդկային զգացմունք, յաւիտենականապէս ապացուցին որ իրանք ունեն ի նկատի ժողովրդի բարօրութիւնը և սորանով իրանց յատուկ երջանկութիւնը։

Այսպիսի համակրանք, այսպիսի հասարակութեան միութիւն մեծ նշանակութիւն ունի և օրինակելի է։ Այս հաստատ հիմքի վրա հիմնված յիշեալ գործին բարի հեռանկներ չեն պակասի. դատապարտեալ է այն անդամը, որը դէպի ընկերութեան նպատակը որ և է անհաւատարմութիւն կամ անտարբերութիւն ցոյց կը տայ։ Ընդհանրապէս հայերը ամեն հասարակական գործում անձնանուէր են. հասարակական գործում աշխատում են այնքան, որքան կարող են, առատութեամբ հանում են գրպանից այն տուրքը, որ պահանջում է մարդկութեան պարտաւորութիւնը. ընդհանուր գործով զբաղվել ամենայն հայ մէկը միւսին նեցուկ է լինում. թէ փոքրը և թէ մեծը շտապում է ներս մտցնել ընդհանուր, հասարական գործի համար իր զոհաբերութիւնը։ Այս ուղղութիւնում նրանց բարի ձգտումները վերջ չունեն։ Ամեն քաղաքի եկեղեցիների գաւիթներում օրից օր ստեղծվում են ուսումնարաններ հասարակութեան փողերով։ Ամեն ուսումնական և լուսաւորեալ անձը օգնում է առանց առձիկի այս բարի գործին։

Այս միութեան պատճառը ի՞նչ է։ Մի՞թէ հարստանալու դիտաւորութիւնը։— Ո՛չ... Սորա պատճառն է զգացմունքը, սերը դէպի իր եղբայրակիցները։

Երէկ Արծրունու թատրոնում հաւաքված էին, բացի մի քանի հարուստներից, այնպիսի անձինք, որոնք ապրում են միայն իրանց գիտութիւնով, աշխատանքով։

Հարուստները, միլիոնատէրերը և հարիւր հազարներ ունեցողները, լաւ ուսել խմելու և զուարճութեան սովոր, թագնվել էին իրանց երեք չորս յարկանի տների ծակերում։ Այս անձինք իրանց համար կենդանի Աստուած շինել են սեպհական գրպանը և երգրպագում են միայն իրանց երկաթէ անդուկներին։

---

### ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

Նոյեմբերի 14-ին

Առողջապահական պայմաններից մէկը մարդուս ոտերը ազատ պահելն է, իսկ գլուխն ըստ կարողութեան չափու ցրտի սովորցնելը. բայց ափսոս, մեզ մօտ Շամախում սրա հակառակն է։ Այդ մարդու գլխին միշտ ամառն ու ձմեռը կը տեսնես ոչխարի մորթուց կարած մի ահագին գդակ, որ կարծես թէ մի ամբողջ գառն է մանածում գլխին, բայց մի և նոյն ժամանակ ոտները գուլպաների մէջ թրջված և սառած, անճոռնի մաշիկներով ման է գալիս. իսկ կին մարդը իր գլուխն եռապատիկ և քառապատիկ շորերով փաթաթած ասանը ոտաբոբիկ ման գալիս։ Քիչերն են տեղս, որ բացառութիւն են անում թէ մարդկանց և թէ կանանց մէջ։—Թէ որ ես սկսելու լինեմ սրա վրա մանրամասն խօսելու, իմ նպատակից հեռացած կը լինեմ, բայց իմ փափագս է, ինչպէս խոստացել էի պատուական «Մշակ» լրագրի 204 համարում զետեղած յօդուածիս մէջ, գարձնել յարգելի ծնողների ուշադրութիւնը Շամախում ուսանող իրանց զաւակների ոտնամանների վրա, որոնց յարմարութիւնից մեծ կախում ունի նրանց առողջութիւնը։

Երեխայի ոտնամանը այնպէս վատ ձեով է կարած, որ նրա ոտի մեծ մասը ցեխից և ձիւնից պաշտպանված չէ. միայն գարշապարի ծայրն է կարողանում մացնել հրէշաւոր մաշիկի մէջ, որի մէկ ու կէս վերշոկ բարձրութեամբ կրունկը ուղղակի չէ կանգնում մարդուս ոտի ամբողջ կրունկի տակ, այնպէս որ ոտի կրունկը կիսով չափ մաշիկից դուրս մնալով, մարմնի ծանրութիւնը աւելի ընկած է լինում, բնականին հակառակ, գարշապարի առաջի մասի վրա. ուստի խեղճ երեխան ամեն մի քայլափոխում զգուշութիւն է գործ դնում ոտի մատներով ամուր պահել մաշիկները, որ ոտից դուրս չը գան. իսկ ցեխը թանձր եղած ժամանակին, չէ օգնում նրան և զգուշութիւնը. յանկարծ խեղճի ոտները մաշիկներից դուրս պրծնելով կոխում է ցեխի մէջ և գարձնալ ցեխոտ ոտներով հագնում մաշիկները և գալիս ուսումնարան։ Հիմա խնդիրն սորանումն է. ինչ պիտի անէ խեղճ երեխան. եւրոպական ձեով կարած կօշիկների պէս հեշտութեամբ չէ կարող մաքրել իր մաշիկները առանց ոտից հանելու, այլ ստիպված է. թէ որ հրամայեն նորան, հանել, վեր առնել իր ձեռքը և սկսել դանակով կամ մի տաշեղով մաքրելու, որով և անկասկած ապականելու է իր հագուստը և ձեռները, և ապա իր ցեխոտ ձեռներով էլ իր գրքերը և տետրակները։ Թէ որ թոյլ տան հարիւրաւոր այդպիսիներին ցեխոտ ոտներով ներս մտնել, ապա դասատուները կապականեն և կը գարձնեն նրան մուրի, և վայ այն ուսուցչին, որ թոքացաւի հիւանդութեամբ տանջվում է, մի այդպիսի ցեխոտ և փոշոտ դասատունը աւելի լայն բացում է գերեզմանի դուռը անբաղդ ուսուցչի համար, աւելի շուտ կլանելով իր զոհը. այն ինչ կարելի էր մի մաքուր դասատան մէջ քանի մի տարի աւել ապրէր։ Իսկ թէ որ երեխան հանէ և թողնէ իր մաշիկները նախասենեակում ու թաց գուլպաներով ներս մտնէ, ապա կը մրսացնէ ոտները և կը հիւանդանայ. ուրեմն խեղճն էլ մի ուրիշ ելք չունի։ Այդպիսի անյարմարութիւնների հետ մեր ուսումնարանները միշտ մաքառում են և գարձեալ չեն կարողանում նրանցից ազատվել։ Շամախու արքունական ուսումնարանը վաղուց է, որ աշխատում է համոզել աշակերտների ծնողներին ուշադրութիւն գարձնել իրանց զաւակների ոտնամանների վրա, բայց ափսոս որ նա մինչ օրս չէ հասել իր նպատակին. գարձեալ մեծ բազմութեամբ գալիս են աշակերտները յիշեալ մաշիկներով. դեռ չեմ ասում այն անյարմարութիւնը, երբ գանգատվում են, թէ իրանց մաշիկները փոխվել են, եկ հիմայ որոշիր թէ որը որին է պատկանում, մարդուս հոգին կատարեալ տանջվում է։—Չեմ կարող ասել, պատուելի ծնողներ, որ դուք չէք սիրում ձեր զաւակներին, քանզի դուք նրանց կրթութեան համար հոգ տանելով ցոյց էք տալիս, թէ նրանց սիրում էք. բայց ինչ օգուտ, ասացէք խնդրեմ, ուսումը առանց առողջութեան կարելի է մտածէք, թէ երեխան ոտից մրսելով չէ կարող ինչասվել և ասէք, ապա ինչու դիւղական երեխայքը չեն ինչասվում, երբ նրանք շատ անգամ բոբիկ ոտով են մանգալիս. բայց մոթթէ չէք հաւատում, որ գիւղացիների զաւակների մեծ մասը զոհ են գնում անպատկանութեան և անզգուշութեան, և հէնց դա է պատճառը, որ գիւղի բնակիչները այնքան չեն աճում, ինչպէս քաղաքներինը։ Մեր ասիական կօշկակարները գոնէ օրինակ վեր առնէին գիւղացի մալականներից, որոնք տեղային կաշուց երկու սեռի համար ես պատրաստում են յարմար կօշիկներ։ Ճշմարիտ է, որ Շամախում շատ տների յատակը հող լինելով գորգերով ծածկված է, նրա վրա մաշիկներով մանգալը դժուար է, վասնորոյ հարկաւոր է մաշիկները թողնել նախասենեակում և գուլպաներով ներս մտնել, բայց ասացէք, մոթթէ կրկնակօշիկների ձեով չէ կարելի աւելի գեղեցիկ կօշիկներ կարել և յարմարացնել տեղային հանգամանքներին, միայն թէ ոտը ցրտից և խոնաւութիւնից պատսպարված լինի։ Թէև սա փոքր ինչ թանգ կը նստէ, քան թէ ասիական ձեով կարած մաշիկները, բայց միւս կողմից բժշկի և դեղօրայքի տուած փողներդ ձեզ մօտ կը մնայ։

Վերջացնելով իմ խօսքս, յատուկ կը խնդրեմ պատուելի ծնողներից, խնայելով ձեր զաւակների և նրանց ուսուցիչների առողջութիւնը, հոգ տանէք ձեր զաւակների ոտնամանները ներկայ պահանջմունքին յարմարեցնելու համար, որով ձեր ուսումնարանները ապահովված կը լինեն վերոյիշեալ հոգից։

Ի. Փիրբուդաղեանց

---

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք հետեւեալը։ «Մենք կարող ենք հաղորդել մեր ընթերցողներին որ երէկ մեր գեւապանը կ. Պոլսի մէջ տեղեկացրեց հեռագրով Փոխարքայի Գլխաւոր Կառավարութեանը Թիւրքաց տէրութիւնից ըստացված կատարելապէս հանգստացնող զեկուցումների մասին այն հիւանդութեան բժշկական հետազօտութեան վերաբերութեամբ, որ յայտնվել է Վիցա գիւղում, Տրապիզոնի վիլայէթում։ Այդ զեկուցումների հիման վրա Վիցայում այս բոպէիս ոչ ժանտախտ, ոչ էլ մի այլ վարակիչ հիւանդութիւն կայ։

—

Մենք համաձայն չենք այն յօդուածի հետ որ տպվել է «Кавказъ» լրագրում հայոց բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովի ընտրութիւնների մասին։ Շատ կարելի է որ ընտրութիւնները, ինչպէս մեր բոլոր ընտրութիւնները, շատ կանոնաւոր չեն եղել և աւելի կանոնաւոր կը լինէին եթէ հետեւէին բժշկապետ Շահ-Զարոնեանցի առաջարկութեանը, բայց համաձայն չենք այն մտքի հետ որ ընտրվածների մէջ բոլորը պէտք է լինէին ինտելիգենցիային պատկանողները։ Նախ մեծ մասը, ինն հոգուց վեցը, պատկանում են համալսարանական դասակարգին և երեք հոգի միայն չեն պատկանում ինտելիգենցիա անուանված դասակարգին, իսկ երկրորդ՝ այն էլ կասենք որ շատ անգամ ինտելիգենցիային չը պատկանողները, եթէ ազնիւ և խելացի մարդիկ են, կարող են նոյնքան և աւելի լաւ ադմինիստրատորներ լինել, քան թէ համալսարանականները։ Երբ ընտրութիւններ եղան «Թարգմանական» ընկերութեան համար, մենք մեր զարմանքը յայտնեցինք որ վարչութեան մէջ ընտրում էին նրանց, որոնք խմբագրական մասնաժողովին աւելի կը յարմարվէին, իսկ խմբագրական մասնաժողովի մէջ ընտրեցին մի քանի մարդիկ, որոնք